



Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Վ Ճ Ի Ռ

Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մենք, վազգեն Կաթողիկոս Ամենայն Հայոց, այսու մեր հայրապետական վճռով հաստատելով Գերագույն Հոգևոր Խորհրդի 12 ապրիլ 1957 թվականի առաջարկը ի մասին Նդիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և՝

1) ի նկատի առնելով Նրուսաղեմի Հայոց Պատրիարքական Ս. Աթոռի միաբանական ընդհանուր ժողովի 1956 թվականի 2 և 13 հոկտեմբերի նիստերի որոշումները Նդիշե արքեպիսկոպոսի Պատրիարքական տեղապանության և Լուսարարապետության պաշտոններից դադարեցման մասին և 1957 թվականի մարտի 5-ի որոշումը նրան միաբանության շարքից արտաքսելու մասին,

2) նկատելով, որ Տերտերյան արքեպիսկոպոսը ծանրակշիռ ամբաստանությունների ներքև է գտնվում իր բարոյական կենցաղով և այդու իսկ իր վրա է հրավիրել Նկեղեցու և Ազգի միաճամուռ սաստիկ վրդովմունքն ու դատապարտումը,

3) նկատելով, որ Նդիշե արքեպիսկոպոսի արարքները Նրուսաղեմի Ս. Աթոռի շաների և Սրբոց Հակոբյանց միաբանության եղբայրակիցների դեմ, ծանր կերպով անդրադարձել են Հայ Նկեղեցու և հայ հոգևորականության վարկի վրա հաշս հայ ժողովրդի և օտար ազգերի,

4) նկատելով, որ իր գործելակերպով անհավատարիմ է գտնվել Տերտերյան արքեպիսկոպոսը Մայր Աթոռի հանդեպ և առ ոչինչ է համարել վերջին վեց ամիսների ընթացքում Մեր Հայրապետական հորդորներն ու կոչերը, ու այդպիսով դրժել է իր հավատարմության ուխտը, որ նա կատարել է իշման Ս. Սեդակի առաջ 1951 թվականի հուլիսի 7-ին իր եպիսկոպոս ձեռնադրման առթիվ Ս. Էջմիածնում,

5) նկատի առնելով 1957 թվականի փետրվար 25 թվակիր Նդիշե արքեպիսկոպոս Տերտերյանի ինքնապաշտպանության գիրք ուղղված Նրուսաղեմի միաբանական ընդհանուր ժողովին և այս վերջինս պատասխանները,

6) հիմնվելով նաև նրա մասին Հայ Նկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռների և բեմերի վերաբերմունքի և տեսակետների վրա,

ա) Մենք հաստատում ենք Նդիշե արքեպիսկոպոսի նկատմամբ առնված բոլոր որոշումները Նրուսաղեմի միաբանական ընդհանուր ժողովի կողմից:

բ) Նա ենք վերցնում նրանից արքայան պատիվը, որը շնորհվել է նրան Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից 1951 թվականին եպիսկոպոս ձեռնադրության առթիվ, նկատի ունենալով նրա Պատրիարքական տեղապանի հանգամանքը:

գ) Նդիշե եպիսկոպոսի պարագան ներկայացնել առաջիկա Եպիսկոպոսական ժողովին՝ նրա մասին կանոնական վերջնական որոշում կայացնելու համար:

դ) Մինչ այդ Տերտերյան եպիսկոպոսը մնում է կախակալված, փիլոնագուրկ, և որևէ ձևով և ոչ մի տեղ չի կարող ներկայացնել ոչ մի վարչական և հոգևոր իշխանություն:

ե) Մինչ Եպիսկոպոսական ժողովի գումարումը և վերջնական վճռի կայացումը, Տերտերյան եպիսկոպոսի համար սահմանում ենք պարտադիր բնակավայր Բերդեհնում հայոց Ս. Մենդյան վանքում 1957 թվականի մայիսի 1-ից սկսյալ, գրկելով նրան սրբազան արարողություններին մասնակցելուց:

զ) Երե մինչ Եպիսկոպոսական ժողովի գումարումը և վերջնական վճռի կայացումը Տերտերյան Եպիսկոպոսն անտեսի վերոնիշյալ որոշումները և որևէ ձևով շարունակի վնաս հասցնել Հայ Եկեղեցուն և Երուսաղեմի Ս. Արքուսյն, այդ դեպքում Մենք կտանք հայրապետական Մեր վերջնական վճիռը հատուկ կոնդակով:

13 ապրիլի 1957 թ.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Կոչ ենք անում մեր բոլոր նվիրապետական Աթոռներին, քեմերին ու համայն հայ ժողովրդին՝ չֆաջալերել նրան և մնալ հաստատ ու խաղաղ Եկեղեցու և Ազգի շահերի վեմի վրա:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հնազանդելով Ձերդ Վեհափառության հրահանգներուն և կարգադրություններուն, պարտք կհամարիմ երթալ Բեթղեհեմ:

ԵԳԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

21 ապրիլի 1957

ԱՄՄԱՆ

